

Պ. Մանդինեանի տուած օգուտը նոր սերնդի կրթութեան գործին այնքան մեծ է՝ որ մենք միայն ցաւել կարող ենք հայ հասարակութեան ցոյց տուած անտարբերութեան վերայ:

### † ՅԱԿՈՎՔ ՃԱՂԱՐԲԵԴԻԵԱՆՑ

Հայ ազգի մատաղ սերնդի դաստիարակութեան նույի րուած անհատներից առաջին գոհը չէ հանդ. Յակովք Ճաղարբէգեանցը և ոչ էլ վերջինը կը լինի. այս վշտու ասպարէզը շատ ծաղիկ կեանք է մարել և դեռ կը շարունակէ մարել նա նոյն դառն և յուսահատ դրութեամբ, նոյն դժբախտ և ցաւալի պարագաներում. Ո՞րքան ովկորութեամբ աղնիւ երիտասարդներ մտել են հայի կեանքի լուսան անդաստանը մշակելու, բայց և ինչպէս ուժասպառ, կենալ, յուսահատ թողել հեռացել են, կամ թէ շարունակել են հիմուած, նուաղած այդ վեհ և բարձր կոչման ծառայել, նուիրուել մի գործի. որ պահանջում է անկեղծ ու աղնիւ մշակներ: Ո՞րքան կոկոններ են դեռ չը բացուած թառամել... որքան լեզուներ է արմատից կարել մեր հասարակութեան խորին անտարբերութեան սառնամանիքը:

1900 թ. Յունուար 1-ին բոլորից մոռացուած, յուսահատ գրութեան մէջ, հեռու իրեն յարգողներից իւր մանկանացու չարատանջ կեանքը կնքեց զրական ասպարիզի համեստ մշակներից մէկը՝ Յակովք Ճաղարբէզեանց:

Հանգուցեալը ծնուել է Շուշի քաղաքում 1864 թուին. իւր սկզբնական կրթութիւնը ստացել է Նախ մասնաւոր մարդու մօտ, ապա մտել է թեմական դպրոցը, որ այդ ժամանակ միայն չորս դասարան ունէր և միակ բարեկարգ վարժարանն էր. Ճաղարբէզեանը եօթը տարի մնաց այս դպրոցում և հանդիսացաւ իրու ամենաընդունակ ու յառաջադէմ աշակերտներից մէկը. Նա չափից գուրս աշխատասէր տղայ էր և այդ աշխատասիրութիւնը եղաւ նրա ապագայ գործունէութեան հիմքը: Դպրոցից նա գիտութեան մի մեծ պաշար էլ չը տարաւ իւր հետ, որովհետև միմիայն չոր ու ցամաք առարկաներն էին սովորեցնում. 1881 թուականին նա աւարտեց թեմ. դպրոցը. իսկ այդ միջոցում գեռ ևս Ղարաբաղի թեմում գրեթէ չը կային. ծխական դպրոցներ. ճիշտ է, մի երկուաը գոյութիւն ունէին, բայց խիստ ողորմելի վիճակի մէջ. մինչդեռ Շամախու թեմում կային դպրոցներ, բայց նոքա էլ չունէին յարմար դասատուներ թեմական դպրոց չունենալու պատճառով. այնպէս որ նուշուց շատ երիտասարդներ աւարակուն պէս դիմում էին Շամախու թեմը:

1881 թուականին Յովհ. Միլզարէցեանի հրաւիրմամբ նա դնում է Մադրասա գիւղը, ծխական դպրոցի ուսուցչի պաշտօ. նով և տարեկան 200 ը. ոռնկով. թէ որքան դժուար էր պա. րապել մեր այն ժամանակուայ ծխական դպրոցներում, ուր չը կար կանոնաւոր դասարան, նստարան, յարմար դասագրքեր և այլն, այդ երեսում է նրանից, որ ճաղարձէցեանն սկզբում իմաստ մեծ նեղութիւն էր կրում դասատութեան ընթացքում, միայն աւադ ուսուցչի օգնութեամբ և իւր տոկուն աշխատան. քով նա կամաց կամաց կարողացաւ այդ դժուարին ասպարի. գում գործելու եղանակ դտնել իւր համար. Մադրասա նա մնում է մինչև 1883 թուականը, 1883—1884 թ. նա վա. րադաւնում է Շուշի և ծառայում է Զաւադ բէկ Խշանեանի մասնաւոր դպրոցում իրքն վերակացու. 1885 թ. հրաւիրւում է Շամախի իրքն աւագ ուսուցչի օրիորդաց և տղայոց երկդա. սեան ծխական ուսումնարանի. Այս ժամանակուանից արդէն սկիզբն է դրւում ճաղարձէցեանի ուսուցչական բուն գործու. նէութեան. այժմ նա հանդէս է գալիս իրքն ինքնուրոյն գործիչ մի հաստատութեան մէջ, որի զեկը իր ձեռքումն էր և ուղղու. թիւնը իրանից կախուած և որ կառավարելու համար քիչ ու շատ փորձառութիւն էր ստացել, նա կարողանում է ժողովը. դին կապել դպրոցի հետ և նրա սէկը գրաւել. այդ նպատակի համար նա կազմակերպում էր հանդէսներ զանազան տօների առթիւ և ըստ պատշաճի ճառեր էր արտասանում աշակերտ. ների ծնողների ներկայութեամբ. նա կարողանում էր մաքուր հայերէն խօսքով բարոյական մտքեր և գաղափարներ ներշնչել հասարակութեան ու այսպիսով սիրելի դարձնել դպրոցը. մի խօսքով Շամախում նա միակ համակերպ և սիրելի անձնաւո. րութիւնն էր, որին յարգում էին ի բոլոր սրտէ և անկեղծ զգաց. մամբ: 1888 թ. նա սահպուած է լինում ընտանեկան պատճառ. ներպ թողնել Շամախին և փոխադրուել նուշի թեմական դրպ. րոցի ուսուցչի պաշտօնով, Զաւադ բէկ Խշանեանի հրաւիր. մամբ՝ իրքն դասատու սկզբում Հայ լեզուի, ընդ. աշխարհա. գրութեան և տօմարագիտութեան:

Այս միջոցը հանգուցեալի մտաւոր ոյժերի զարդացման ա. մենաշխատոր ժամանակն էր. նա միջոց ունէր իւր մտաւոր հորիզոնը ընդլայնել, անդադար ընթերցանութեամբ նորանոր ժանութութիւններ ձեռք բնիել. բացի լորանից մի քանի առար. կաների դասատութիւնը (որոնք յետոյ նրան յանձնուեցան) ինչպէս Հ. եկեղ. պատմութեան, տեսութիւն մատենագրութեան, բանահիւսութեան պատմութեան և Հայոց պատմութեան, ա. ռիթ տուին նորան այդ առարկաները ընդարձակօրէն ուսում. նասիրելու և իւրացնելու:

Երկրորդ տարին թեմական դպրոցի ուսուցչական խմբի մէջ նա արդէն որոշ դիրք էր գրաւում. աշակերտները աւելի

յարդում, պատում էին նորան: Դասի վերաբերմամբ նա խիստ էր, արթուն, լրջահայեաց: Նա սէր էր ներշնչում դէպի իւր առարկան, հետաքրիլը դարձնում, և այսպէս աշակերտների միավը աւելի կրթում, նոցա մտքի պաշարը առատացնում: Բացի դասերից նա աշխատում էր մասնաւոր ընթերցանութեամբ, որ տեղի էր ունենում շաբաթը երկու անգամ դպրոցում, աշակերտների ընթերցանութեանը ուղղութիւն տալ, մի խօսքով պատրաստել հասարակութեան համար օգտակար անհատներ:

1892 թ. նա իւր կամքով թողեց թեմական դպրոցը, որովհետեւ անդադար խովութիւնները ուսուցչական ներքին կեանքը անտանելի էին դարձրել: Հանգուցեալին գրկաբաց ընդունեցին Շուշու օրիորդաց երկդասեան դպրոցը, ճանաչելով իրու և եւանդուն և գործունեայ ուսուցիչ այստեղ նա մնաց երկու ատրի և այդ կարճ ժամանակուաց ընթացքում նա գրաւեց աշակերտուհիների յարգանքն ու համակրանքը: Ներկայ եմ եղել այն աղմկայոյզ ծափահարութեան, որով հաօարակութիւնը իւր համակրանքն արտայայտեց նորա մի ճառ ի առթիւ, որ ոգերուած արտասանեց հանգուցեալը մի հանդիսում Գամառաֆայի պատկանական անձնաւորութեան և բանաստեղծութեանց վերաբերմաբն:

Ոքան գերազանց էր նրա ուսուցչական գործունէութիւնը, այնքան աննախանձելի էր ընտանեկան դրութիւնը. թեմական դպրոցում եղած ժամանակ՝ վերջին տարին, նա ամուսնանում է, այնպէս որ նա պիտի իւր ուսուցչական չնշին ունակոր պահէր և ծնողներին և ամուսնուն, նա թողնում է Շուշին, դիմում է Տփխիս նոյն պաշտօնով, որպէս զի իրու Կովկասի կենդրոն այնտեղ կարող լինի ծանօթանալ գրական գործիչների հետ և նոցա հետ աշխատէ գրական ասպարիդում. նա գեռ Շուշուց սկսել էր աշխատակցել «Նոր. Դար»-ին. 1894 թ. նա Մողնու եկեղեցու ծխական դպրոցում աւագ ուսուցչի պաշտօնը ստանձնեց և այդտեղ էլ մնաց մինչև փակումը 1896 թ.:

Այսպիսով վերջանում է նորա ուսուցչական բեղմնաւոր գործունէութիւնը: Նա հեռացաւ այդ փշոտ ասպարիդից. հեռացաւ, բայց տանելով իւր հետ հայ ուսուցչին այնքան մօտ, և նորանից անբաժան մի ցաւ՝ թոքախտ, իրու տրիասուր 15 ամեայ ուսուցչական համեստ գործունէութեան...

Սկսուեց նորա կեանքի կրթական ըոպէն, ամենադաժան և վատթար ժամանակը. ինչ պիտի անէր, ինչ միջոցով պիտի հայթայթէր իւր ընտանիքի պարէնը. նա արդէն կորցրել էր իւր աշխայժը, առողջութիւնը: Այսպիսի վիճակի մէջ նա դիմում է Բագու բախտ որոնելու, դիմում է մեր երկրի այն կենդրոնը, ուր մարում են երիտասարդ ուժերը, ուր բժանում է տաղանդը և ուր բարձր ձգտումներն ու զգացումները տեղի են տալիս և ընկճում սոսկալի իրականութեան առաջ: Յա-

Չղողութիւն չգտնելով առեւտրական ասպարիզում՝ նա գրավաճառանոց բացաւ, բայց ամեն տեղ էլ բախտը հալածում էր նրան. այդտեղ էլ նա լնասուեց, Բժիշկների խորհրդով՝ 1897 թ. նա թողնում է Խազուն եւ ընտանիքով փոխադրուում է Խանքէնդ աւանը, ուր եւ անց է կացնում իւր թշուառ կեանքի մնացորդը: Շատ անգամ եմ տեսել նորան դալուկ դէմքով, դողոջուն մարմնով քայլամոլոր պտտելիս Խանքէնդի զրոսավայրում. թէս այդտիսի ցաւալի դրութեան մէջ էլ, նա երբէք չէր դադարում գրականութեամբ զրադուելուց: 1899 թ. նա հրատարակեց Շուշում «Հարստութեան Աւետարան» գեղեցիկ եւ վսեմ իմաստով գրուածքը. պաշտպանելով միանդամյան Ամերիկացի յայտնի միլիոնատէր Կերնեցիի կարծիքը բարեգործութեան վերաբերմամբ, և նոյնը յորդորելով նաեւ մեր հարուստներին:

Եթէ մեր գրականութիւնը դեռ եւս իւր մանկական հասակում է, եթէ նա կաղէկաղ է յառաջ ընթանում, դրա գըլիսաւոր պատճառն այն է, որ մեր տաղանդաւոր գործիչները ոչ մի խրախոյս չստանալով ոչ մի կողմից՝ իրանց գործունէութեան կիսաճանապարհին լքեալ, յուսահատ թողնում հեռանում են, իսկ նրանց տեղը բռնում են պատահական, անվարժ եւ համբակ գըլիչներ. «Անհատին հասարակական գործչի փշոտ ասպարէղ մղողը նրա էութեան մէջ թագնուած բարոյական գորութիւնն է. Նուիրուած լինելով որոշ գաղափարների, ձգտում ունենալով այդ գաղափարներն իրականացնելու, նրանց արիւն ու մարմին տալու՝ անհատը հասարակական գործի ասպարէզն է իջնում: Եւ որքան վեհ են գաղափարները, որքան ուժեղ է կամքը, այնքան էլ անհատն առաջ է գնում այդ ասպարիզում» (Արձագանք 1896 թ. № 45): Ահա այս ճիշտ գիտակցութեամբ նա հանդէս եկաւ գործելու հայ լրագրութեան օրգաններից մէկում՝ «Նոր-դար»-ում: Պատահական երևոյթ չի կարելի համարել այն, որ նա ընարում է «Նոր-դարը իբրև իւր մտքերը արտապայտելու միջոց. ոչ, հանգուցեալ ձաղաքէդեանը ինքը հոգ-տով և գաղափարով զուտ պահպանողական ուղղութեան մարդ էր և մինչև մահ հաւատարիմ մնաց իւր գծած շաւղին:

Առաջին անգամ մենք տեսնում ենք նորա թարգմանութիւններն ու ոտանաւորները 1885 թ. «Աղքիւրի», մէջ տպագրուած: Ինչպէս ամեն մի նոր ոտք դնող գրականութեան ասպարիզում, այնպէս էլ ձաղարբէգեանը նախ ոտանաւորներ և թարգմանութիւններ սկսեց գրել, բայց ինչպէս երևում է, նա ընդունակ չէր բանաստեղծ լինելու, որը և զգում է ինքը ու թողնում: Այնուհետև նա թղթակցում է «Նոր-Դարցին», սկզբում իբրև գաւառական թղթակից, իսկ ապա արդէն դարձաւ «Նոր-Դարցի» լաւադոյն աշխատակիցներից մէկը: Նորա յօդուածներում ընթեցողը կարող է տեսնել ինքնուրոյն մըտ-

քերի արտայայտութիւն, աւողջ դատողութիւն, խոհուն մտա-  
ծողութիւն, յատկութիւններ, որոնք անհրաժեշտ են իւրաքան-  
չիւր բարեխիղճ աշխատակցին: Նա ունէր ճիշտ և պարզ գա-  
ղափար Հայաստանեայց եկեղեցու բարձր նշանակութեան մա-  
սին, ուստի և հանդէս է զալիս մի շարք յօդուածներով ցոյց  
տալու թէ ինչպիսի անհատներ կարող են պաշտօն կատարել  
այդպիսի մի սուրբ վայրում կամ ինչպիս պիտի նայել քահա-  
նայական խնդրին, որ ժամանակի հրատապ հարցերիցն էր  
և որին հանդուցեալը մի շարք յօդուածներ նուիրեց: Բայց  
աւելի գերակշուղ տեղ են գրաւում Ցպաւորութիւններ—  
վերնագրի տակ աշխատութիւնները՝ նուիրած զանազան հեղի-  
նակների և նոցա գրուածներին թէ մերազնեայ և թէ օ-  
տարազգի. այսպէս յափշտակութեամբ են կարդացւում Շահա-  
զիդի «Լոռնի վշտի», Փրդուսու, Գամառ-Քաթիպայի բանաս.  
տեղծութիւնների, Սունդուկեանի «Ամուսինների», Մօնտեկաց-  
ցայի, Պօտապենկոյի և այլ նշանաւոր երկերի մասին մատենա-  
խոսական յօդուածները:

Ի դէմ ձաղարքէգեանի «Նոր-Դարբ» ունեցաւ մի բարե-  
խիղճ, եռանդուն, սուր լեզուի և գրչի տէր աշխատակցից:

1895 թուից ձաղարքէգեանը մինչև իւր մահը աշխատակ-  
ցեց «Արձագանք» լրագրին, 1896-ից «Լումայ» հանդիսին: Յ.  
ձաղարքէգեանի գրուածներից առանձին գրքերով լոյս են տեսել:

Սօմոյլօփիչի Աշխարհի թագունու դատաստանը<sup>Ա</sup>:

Վահան Մամիկոննեան բատ Ղաղար Փարսկեցու:

Տեսութիւն բանահիառութեան:

Վեհափառ Հայրիկ<sup>Ա</sup> մի փոքրիկ կենսագրութիւն:

Մայրենի լեզու<sup>1</sup> 1 ին և 2 դ տարի ՝ ծխական դպրոց-  
ների համար, որ և Վեհափառի հրամանով ընդունում է ի շարս  
դասագրքերի:

Պատկերագարդ Հայոց պատմութիւն:

Սասունցի Դամիթ:

Հարստութեան Ամետարան<sup>Ա</sup>.. բացի սոցանից հան-  
գուցեալ թողել է ձեռագիր՝ տպագրութեան համար պատրաստ  
մի սուուար գործ և «Յասոնն ու Մէջէա վէպի թարգմանու-  
թիւնը կիսատ:

Ճաղարքէգեանի գործունէութեան համառօտ պատկերը  
վերջացնում եմ իւր իսկ խօսքերով, քաղելով այն գեղեցիկ յօդուա-  
ծից «Հասարակութիւն և հասարակական գործիչ» վերնագրով,  
որ տպուեցաւ «Արձագանք» ի 1896 թ. № 45 ում և ուր կար-  
ծէք յուսահատ իւր վիճակն է նկարագրում:

Հայ գործիչը տանջուել է ոչ միայն յանուն գաղափարի  
մղած կռուի մէջ, ոչ միայն խաւարի նախապաշարմանց դէմ  
պատերազմելիս իրեն հասարակական գործիչ, այլ և իւր ըն-  
տանեկան կեանքի մէջ, իրեն մասնաւոր մարդ, թող նա ծրա-

գիրներ կազմէ. աքնի չարչարուի նրանց իրականացնելու համար. բայց առա դպրոցից վերադառնում է նրա որդին և յայտնում է թէ դպրոցից դուրս արին, որովհետև ուսման վարձը չէ վճարել: Բայց առա անհրաժեշտ կարիքը ճնշում է նրան, թուլացնում ձեռները, կարում թևերը, վայր դցում:

Այս նիւթի ծանր հարուածն է որ հայ գործիչներից շատերին մուրացկանութեան հասցըրեց. նա է որ ճնշում, քամում է նրանց սիրաբ, որ ի վերջոյ ստիպում է գերեզմանին մօտեցած՝ վշտացած հոգուվ իւրեանց դառնութիւնը թափել հասարակութիւն, որ զիտէ միայն դիակներ սիրել...»:

### Ասլան Շահնտպարհանց

## «ՀՈՒՄԱՅԻՑ» ԽՄԲԱԳԻՐՈՒԹԵԱՆ

«Արարատի Բ. թւում բարձր. Բարդուղիմէոս վարդապետը մի նամակով նախ աշխատում է Նումայի մատենախօսութեան առիթ որոնել: Այնուհետև յառաջ բերելով մի քանի կէտեր՝ մեծաբար պարագ է զնում մեզ վրայ բացատրելու, որ ինքը հականայ: Մենք էլ խոնարհաբար բացատրենք:

Բարձր. հայրն ասում է որ «զակաղով» (յանձնաբարութիամբ) եմ գըել: Թող յայտնի լինի իւրեան, որ սովորաբար օրինաւոր ամսագրների ու թերթերի մատենախօսութիւնք յանձնաբարութեամբ են գրւում: «Վաղ վաղ» աճապարուած է համարում այդ գնահատութիւնը, չդիտենալով որ գնահատութեան ժամանակի կարիքը բղխում է իւրաքանչիւր գրուածքի ներքին արժանիքից, ըստ որում այս էլ շատ եղաւ:

Ասում է որ «այնքան լաւ լաւ և հազիւ թէ վատ կարծիքներ» եմ շուայլել. մինչդեռ ոչ թէ կարծիքներ չեմ «շուայլել», այլ և լաւ լաւ կարծիքներ բնաւ. ասած չեմ, այլ միայն որոշել եմ գրուածքի արժանիքը կամ կարդալու շահը և այն տեսակէտը, որով պէտք է առաջնորդուի ընթերցողը:

Դրում է որ ընդամենը մի բան եմ մէջ բերել և սիաալ գտել, այն է՝ վերաբանութեան միտքը և ասում է որ միայն տեղի խնդիր է և ոչ իմաստի: Մինչդեռ յառաջ եմ բերել մի քանի բան իբրև օրինակ, իսկ սիսալներ յառաջ բերելու կարիք չկար, քանի որ քննադատութիւն չէի գրում և աւելորդ էլ էր մի առ մի քննադատել մի գրուածք, որի. քննադատական ար-